

հատոյց լինի եւ երկնից արքայութեան արժանի լիցի հանդերձ ամենայն ընտանեօք. ամէն. թվ. յամին Հայոց ՌՄ (= 1751)»:

Երկաթեայ դրան վրայ.

«Յիշատակ է երկաթեայ դուռս Թէքիրտաղցի Քիրազեան մհի. Սարգսի կենդանի արեւուն եւ որդւոյն մհի. Սերոբէին հոգւոյն ի դուռն սրբոյն Յովհաննու եկեղեցւոյն որ ի սուրբ Երուսաղէմ. թվին ՌՄԻէ (= 1778)»:

Դրան պղինձին վրայ.

«Յիշատակ է դուռս Տիրացու Պաշարաթին եւ իւր ծնողացն հաւրն Միրիջանին եւ մաւրն Մարգարտին ի թվին ՌՁ (= 1631), սուրբ Յովհաննէս Աւետարանչի դրանս. Յիշեցէք զմեզ ի Քրիստոս եւ Աստուած ողորմի սաացէք որք հանդիպիք. եւ Տէր Աստուած ձեզ ողորմեսցի եւ նմա փառք յաւիտեանս. ամէն»:

Դրան պղինձե երկու օղակներուն վրայ.

«Յիշատակ է օղս այս սարկաօզ Պաշարաթին նպաստաւոր ի սուրբ Երուսաղեմայ, Տէր Գրիգոր Հայրապետին»:

«Յիշատակ է օղս սարկաօզ Մեղոօր եւ անպիտան . . . Յիշատակ դուռս Տիրացու Պաշարաթին որ թարգմանի Յաւետիք. թվ. ՌՁ (= 1631)»:

Ներսէս՝ դրան վերելք.

«Ի պատրիարկութեան Տ. Կիրակոսի Վեհի ի նորոգութեան սրբոյ տաճարի. բոլոր մարմարեայ քարինք պատկերօք արար յիշատակ Պուլանըխցի Թաղէոս վարդապետն վասն հոգւոյ ծնողացն Աւետիսի եւ Նուպարի եւ համայն պարազայիցն. ի 1849 սեպտ. 10» (Տե՛ս Սաւաւանեանց, անդ, Բ. Հտր. էջ 1296-97):

